Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1903 - Լ որոշման

«ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության (այսուհետ՝ ԲԿԳ) արժեքներն են թափանցիկությունը, հաշվետվողականությունը, մասնակցությունը և տեխնոլոգիական նորարարությունը, որոնք հանդիսանում են նաև Հայաստանի կառավարության բարեփոխումների հիմնական ուղղությունները:

Հայաստանը վերջին տասնամյակում հետևողականորեն առաջ է մղում բաց կառավարման օրակարգը՝ նպատակ ունենալով ամրապնդել ժողովրդավարությունը, ապահովել թափանցիկություն և քաղաքացիների վստահություն պետական ինստիտուտների նկատմամբ: Այս ճանապարհին իրականացվել են մի շարք հիմնարար բարեփոխումներ. ներդրվել է իրական շահառուների հայտարարագրման ինստիտուտը, ներդրվել և շարունակաբար զարգացել է պաշտոնատար անձանց գույքի և նվերների հայտարարագրման թափանցիկ համակարգեր, իսկ այս համատեքստում գնումների ոլորտում մեկնարկել է նոր համակարգային փոփոխությունները և քաղաքացիական վերահսկողության գործիքների ընդլայնում՝ ներդնելով քաղաքացիական հասարակության համար լիցենզավորման և ետ պայմանագրային վերահսկման գործընթացը: Նոր իրականություն է նաև այսօր աշխատանքային պայմանագրերի թվային համակարգը, որը հնարավորություն կտա ապահովելու աշխատողների իրավունքները և բարելավելու աշխատանքային փոխհարաբերությունների մշակույթը: Այլ ձեռքբերում է տեղական մակարդակում ժողովրդավարական սկզբունքների տարածումը, մասնավորապես՝ մասնակցային բյուջեի կայացմամբ:

ԲԿԳ շրջանակներում ձևավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության հանրային մասնակցության և հաղորդակցության նոր կառուցակարգերը՝ ձևավորելով Վարչապետի աշխատակազմում Մասնակցային և բաց կառավարման հարցրի, ինչպես նաև՝ Ռազմավարական հաղորդակցության վարչությունները: Մշակվել են նոր օրենսդրական նախաձեռնություններ ինչպիսիք են «Հանրային տեղեկությունների մասին» և «Կիբեռանվտանգության մասին» օրենքները և թվային միջավայրի անվտանգության և ապահովման համար նոր մարմնի «Տեղեկատվական համակարգերի կարգավորման» ձևավորման հիմքերը:

Բարելավվել է տեղեկատվության ազատության վիճակագրության միասնական ձևաչափը և պետական կառավարման համակարգի մարմինների տեղեկատվության ազատության ինքնագնահատման մեխանիզմը:

ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրերը կարևոր խթան են հանդիսացել Հայաստանի համար՝ ներդնելով նորարարական մոտեցումներ պետական կառավարման բոլոր մակարդակներում: Մասնակցային բյուջետավորման փորձերը համայնքներում ձևավորել են քաղաքացիական համատեղ ստեղծարարության մշակույթ, որը հետագայում վերածվել է գործադիր իշխանության կողմից համաֆինանսավորման և ավելի լայն ներգրավվածության մեխանիզմների: Տեղական-ԲԿԳ նախաձեռնության շրջանակում Հայաստանի համայնքները՝ Վանաձոր-Գյումրի, Արմավիր, Երևան և Մեծամոր արդեն իսկ դարձել են թափանցիկ և մասնակցային կառավարման հաջողված օրինակներ՝ արժանանալով միջազգային ճանաչման:

Հայաստանի ներկայիս բարեփոխումները նաև ուղղված են թվային փոխակերպմանն ու տեղեկատվության հուսալիությանը. մշակվում են տվյալների հասկացության սահմանման, ենթակառուցվածքի ձևավորման և կիբեռանվտանգության վերահսկողության անկախ ինստիտուտի հիմքերը, զարգանում են ռազմավարական հաղորդակցության կարողությունները՝ ապատեղեկատվության և հիբրիդային սպառնալիքների պայմաններում ժողովրդավարության կայունությունն ապահովելու համար:

Հայաստանը հավատարիմ է բաց կառավարման արժեքներին նաև միջազգային հարթակներում. ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի խորհրդի, ԳՐԵԿՈ-ի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցերի և Միացյալ ազգերի կազմակերպության հետ:

2025 թվականին Հայաստանը ընտրվեց ԲԿԳ Ղեկավար կոմիտեի անդամ՝ ստանձնելով գլոբալ մակարդակով բաց կառավարման արժեքների առաջմղման պատասխանատվություն: Այս համատեքստում Հայաստանի հաջորդ գործողությունների ծրագիրը կշարունակի ամրապնդել նախորդ փուլերին մեկնարկած, սակայն ամբողջությամբ չիրականացված

հանձնառությունների իրականացումը ներկայից ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրով՝ միաժամանակ արձագանքելով նոր մարտահրավերներին:

Այս հանձնառությունները նպատակ ունեն խորացնելու հանրային մասնակցությունը, բարձրացնելու պետական համակարգի հաշվետվողականությունը և զարգացնելու բաց կառավարման մշակույթը՝ ազգային ու տեղական մակարդակներում:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Հանձնառության համարը և անվանումը	**1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենքների կիրարկման ապահովում**
Հանձնառության կարճ նկարագիրը	Կառավարության կողմից իրականացվող ռազմավարական օրակարգերի ներքո պետական քաղաքականության հիմքում դրվում է տվյալը որպես հանրային հարստություն դիտարկելու գաղափարախոսությունը: Այդ քաղաքականության իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության են արժանացել և Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացվել համակարգային երեք օրենքների նախագծեր. 1. «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծը. 2. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը.

	3. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագիծը: Օրենքների նախագծերով նպատակ է դրվել կարգավորել կենսական նշանակության ոլորտներում կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կամ տեղեկատվական համակարգերի կիբեռանվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները, տարանջատել կենսական նշանակության ոլորտները, սահմանել ընթացակարգեր կիբեռմիջադեպերի հայտնաբերման, դրանց մասին ծանուցման, կանխարգելման և լուծման, օրենքի պահանջների պահպանման նկատմամբ մշտադիտարկման, վերահսկողության, պատասխանատվության, կիբեռանվտանգության աուդիտի, ինչպես նաև կիբեռանվտանգության հետ կապված այլ հարաբերությունները, ինչպես նաև հանրությանը թվային անվտանգ միջավայրում կամ բաց տեղեկությունների քաղաքականության իրականացման միջոցով արդյունավետ ու որակյալ ծառայություններ մատուցելու հետ կապված հարաբերությունները, որն ապահովում է նաև հանրային հսկողություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պարտականությունների կատարման նկատմամբ: Ակնկալվում է, որ առաջիկա նստաշրջանի ընթացքում օրենքների նախագծերը կքննարկվեն Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովներում և կներկայացվեն քվեարկության: Հետևաբար, հաշվի առնելով օրենքների համակարգային բնույթը, անհրաժեշտ է մշակել և ներդնել «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծից և «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծից բխող, բաց տեղեկությունների քաղաքականությունը և թվային փոխակերպման ծրագրերի իրականացումը խթանող հիմնական ենթաօրենսդրական իրավական ակտերը: Նշված իրավական ակտերի մշակմամբ և ներդրմամբ կմեկնարկի օրենքների կիրարկման մեխանիզմների ապահովման գործընթացը, որով հնարավորություն է ստեղծվում վարչական տեղեկատվական համակարգերի իրավահենք և քաղաքացիակենտրոն թվայնացման, ձևավորման ու անվտանգ միջավայրում գործարկման, բաց տվյալների քաղաքականության տրամաբանությամբ տվյալների հասանելիության կառուցակարգերի ներդրման համար: Նախատեսվում է մշակել հետևյալ երեք ենթաօրենսդրական իրավական ակտերը. 1. «Կենսական նշանակության ոլորտում շահագործվող կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման չափանիշները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

	2. «Հանրային իշխանության մարմինների կողմից թվային փոխակերպման ծրագրերի իրականացման և այդ ծրագրերի ֆինանսավորման գործընթացի համակարգման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, 3. «Հանրային տեղեկությունների բացահայտման կարգը և շրջանակը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:		
Պատասխանատու մարմինը	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
Այլ համակա-տարողներ	**Կառավարություն**	**Քաղաքացիական հասարակություն**	**Այլ մասնակիցներ (Խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**
	Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ Արդարադատության նախարարություն Ազգային անվտանգու-թյան ծառայություն	Հասարակական կազմակերպություններ, որոնք կմիանան հանձնառությանը	Կենտրոնական բանկ Մասնավոր հատված «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ
Ժամանակահատվածը	2025-2027 թվականներ		

Խնդրի սահմանումը

1. Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը:

Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության մշակումն իր մեջ ներառում է նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերի մշակում, ինչն ուղղված է Հայաստանում տվյալների ձևավորման ու օգտագործման շուրջ հարաբերությունների կարգավորմանը, ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորմանը բաց տվյալների դոկտրինի որդեգրմամբ: Ենթաօրենսդրական ակտերը կիստակեցնեն օրենքների նախագծերով սահմանվող տվյալների շուկայի մասնակիցների իրավունքներն ու պատասխանատվությունը, դրանք նպատակ ունեն մշակվող ենթաօրենսդրական ակտերով ապահովել կենսական նշանակության ոլորտներում շահագործվող

կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման հստակ չափանիշների սահմանումը: Կստեղծեն կարգավորումներ, որոնք կհաստատեն հանրային իշխանության մարմինների կողմից թվային փոխակերպման ծրագրերի իրականացման և դրանց ֆինանսավորման համակարգված ընթացակարգերը: Օրենքների համակարգային բնույթից բխող դրույթները կստանան իրենց գործնական կիրառման գործիքակազմը՝ ապահովելով ինչպես կիբեռանվտանգության, այնպես էլ տվյալների հասանելիության և թվային կառավարման արդյունավետ իրագործում:
2. Որո՞նք են խնդրի պատճառները: Առանց ճիշտ կազմված և համապարփակ ենթաօրենսդրական ակտերի նոր ընդունվելիք օրենքների դրույթները չեն կարող լիարժեքորեն կյանքի կոչվել: Թեև օրենքներով սահմանվում են կիբեռանվտանգության ապահովման, թվային փոխակերպման և հանրային տեղեկությունների բացահայտման ընդհանուր շրջանակները, սակայն դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ են հստակ չափանիշներ, ընթացակարգեր և մեխանիզմներ: Նույնը վերաբերում է թվային փոխակերպման ծրագրերի իրականացման ու ֆինանսավորման համակարգմանը, ինչպես նաև հանրային տեղեկությունների բացահայտման հստակ կանոնակարգմանը: Օրենքների իմպլեմենտացիան ուղիղ կերպով կախված է դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման և ներդրման որակից:
Հանձնառության նկարագրություն
1. Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար: Առկա է անձնական տվյալների պաշտպանության, ինչպես նաև տեղեկատվության ազատությանը վերաբերող օրենսդրությունը, «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին» և ««Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքների նախագծերի փաթեթները, որոնք հավանության են արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարութան կողմից և ներկայացվել ԱԺ, սակայն այդ քայլերը բավարար չեն տվյալների քաղաքականության լիարժեք ներդրման իրավական հիմքերն ապահովելու համար:
2. Ի՞նչ լուծում ենք առաջարկում: Խնդրի լուծման ուղղությամբ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, շահագրգիռ կառույցների հետ համագործակցությամբ, ստանձնել է «Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության ձևավորում» միջոցառումը, ինչը նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի և Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ հռչակված նպատակներից է: Դրան զուգահեռ իրականացվում են ենթաօրենսդրական ակտերի Եվրոպական միության համարժեք ակտերի, միջազգային լավագույն փորձի հետազոտություններ և նախագծերի մշակման

աշխատանքներ:	
3. Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը: Տվյալների բացահայտման քաղաքականության, կիբեռանվտանգության և թվային փոխակերպման ծրագրերի իրականացման ու ֆինանսավորման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի մշակումը և ընդունումը թույլ կտան կարգավորել թվային հասարակության և թվային պետության ու ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ առաջնային ենթաօրենսդրական իրավական դաշտը: Որպես վերջնարդյունք ակնկալվում է ստեղծել քաղաքացիակենտրոն և տվյալահենք քաղաքականության մշակման և իրականացման, տնտեսության և թվային հասարակության զարգացման համար կրիտիկական և լիարժեք իրավական հիմքեր:	
Հանձնառության վերլուծություն	
Հարցեր	**Պատասխան**
1. Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	Ենթաօրենսդրական իրավական ակտերը կապահովեն հանրային տեղեկությունների բացահայտման կարգը ու շրջանակը, կձևավորվի նաև բաց տվյալների հասանելիության ու թափանցիկության հետ կապված կանոնների համակարգ՝ հիմքում ունենալով բաց տվյալների դոկտրինը:
2. Ինչպե՞ս հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվողականությունը:	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվելու և հստակեցվելու են բաց տվյալների դասակարգման, օգտագործելիության, տվյալների պաշտպանության և ճշգրիտ տարածման չափանիշները, հաշվետվողականությունը, այլ իրավահարաբերություններ: Ծրագրերի իրականացման և ֆինանսավորման կարգի հստակեցումը կստիպի պետական մարմիններին հիմնավորված ձևով ներկայացնել, թե ինչպես են օգտագործվում բյուջետային ռեսուրսները որակյալ և անվտանգ թվային միջավայրում քաղաքացիներին ծառայություններ մատուցելու համար, ինչով էլ կավելանա նաև հանրային հսկողության գործիքները:
3. Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքացիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիթորինգին:	Բաց տվյալների քաղաքականության հիման վրա ենթաօրենսդրական ակտերի մշակումը և փաստացի ներդրումը նաև կնպաստեն քաղաքացի-պետություն հաղորդակցության ու մասնակցային կառավարման համակարգերի զարգացմանը՝ առավել խելացի և փոխադարձ վստահելի լուծումների ու հարթակների կիրարկման միջոցով: Միաժամանակ, տվյալների ենթաօրենսդրական ակտերը նաև կապահովվեն բավարար իրավական ենթակառուցվածք,

	ինչը հնարավորություն կտա ներդնել հանրային ծառայությունների որակի մոնիթորինգի, հսկողության և կառավարման համակարգեր, խրախուսել հանրային ծառայությունների՝ քաղաքացիակենտրոն և քաղաքացու փորձառության հիման վրա նախագծման ու մատուցման պրակտիկաները:

Հանձնառության պլանավորում

Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**		
Գործողություն 1. Միջազգային փորձի ուսումնասիրություն միջազգային, տեղի փորձագետների և պետական հատվածի շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ	Հայաստանի համար լավագույն կիրառելի փորձի ընտրություն	2025 թվականի 2-րդ կիսամյակ	**Պատասխանատու՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ,	ՀԿ-ներ և կազմակեր- պություններ	Կենտրոնական բանկ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ Միջազգային և տեղական

					մասնագիտական ընկերություններ, մասնավոր փորձագետներ
Գործողություն 2. Միջազգային փորձի և տեղական համա-տեքստի հիման վրա ենթաօրենսդրական ակտի նախագծի մշակում	Օրենսդրական հիմքի ձևավորում	2026 թվականի 1-ին կիսամյակ	**Պատասխանատու՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Արդարադատության նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն	ՀԿ-ներ և կազմակեր-պություններ	Կենտրոնական բանկ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ Միջազգային և տեղական մասնագիտական ընկերություններ, մասնավոր փորձագետներ
Գործողություն 3. Ենթաօրենսդրական	Նախագծի նախնական տարբերակի մշակման փուլում հասանելի փորձագիտական	2026 թվականի 1-ին կիսամյակ	**Պատասխանատու՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
			Աջակից շահագրգիռ կողմեր		

ակտի նախագծի շուրջ միջազգային և տեղական փորձագիտական քննարկումներ	գիտելիքի հնարավորինս կիրառում և կարծիքի հավաքագրում		**Կառավարություն**	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Արդարադատության նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն	ՀԿ-ներ և կազմակեր-պություններ, որոնք կմիանան հանձնառու-թյանը	Կենտրոնական բանկ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ Միջազգային և տեղական մասնագիտական ընկերություններ, մասնավոր փորձագետներ
Գործողություն 4. Ենթաօրենսդրական ակտի նախագծի շուրջ հանրային քննարկումներ ընդունված պաշտոնական խողովակներով և առավել ինտերակտիվ ու մասնակցային ձևաչափերով	Օրենսդրական լուծումների շուրջ հանրային իրազեկում, ընկալումների և կարծիքի և հանրային կոնսենսուսի ձևավորում	2026 թվականի 2-րդ կիսամյակ	**Պատասխանատու՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Արդարադատության	ՀԿ-ներ և կազմակեր-պություններ	Կենտրոնական բանկ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի

			նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն		գործակալություն» հիմնադրամ
Գործողություն 5. Վերջնական փաստաթղթի շրջանառություն պետական կառավարման համակարգի մարմինների միջև: Համապատասխան իրավական ակտի ընդունում	Հիմնական հայեցակարգային փաստաթուղթը կուղեկցվի հայեցակարգի կիրառման և օգտագործման ձեռնարկներով:	2027 թվականի 1-ին կիսամյակ	**Պատասխանատու՝** Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Ազգային անվտանգության ծառայություն «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ	Այլ ՀԿ-ներ և կազմակեր-պություններ	
Հանձնառության կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ «6. Ինստիտուցիոնալ	Հանրային կառավարման բարեփոխումների	ՀՀ թվայնացման 2021-2025 թթ. ռազմավարություն		

միջազգային գործընթացների հետ	զարգացում» բաժին	ռազմավարություն			

Երկիր	Հայաստանի Հանրապետություն		
Հանձնառության համարը և անվանումը	**2. Մասնակցային կառավարման կատարելագործում և ներդնում**		
Հանձնառության կարճ նկարագիրը	Զարգացնել և կատարելագործել մասնակցային կառավարման մեխանիզմները պետական կառավարման համակարգում: Վերանայել գործող կառուցակարգերը, արդիականացնել ինստիտուցիոնալ ֆունկցիոնալ համակարգը և ներդնել նորարարական մոդելներ պետության կողմից վարվող քաղաքականությունների մշակման փուլում ոչ պետական շահագրգիռ կողմերին ներգրավելու համար, հանրային ներգրավման միջոցով ապահովել հանրության հետ հաղորդակցության և տեղեկատվության հասցեագրման գործընթացները:		
Պատասխանատու մարմինը	Վարչապետի աշխատակազմ		
Այլ համակատա-ողներ	**Կառավարություն**	**Քաղաքացիական հասարակություն**	**Այլ մասնակիցներ**

	Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Պետական կառավար-ման համակարգի մարմիններ:	«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն» հասարակական կազմակերպություն Ինֆորմացիայի ազատության կենտրոն «ՀԿ կենտրոն» հասարակական կազմակերպություն «Կ.Ե.Տ.» ՀԿ Այլ հասարակական կազմակերպություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններ	
Ժամանակահատվածը	2025 թ. դեկտեմբեր – 2027 թ. դեկտեմբեր		

Խնդրի սահմանումը

4. Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը

Պետական կառավարման համակարգում առկա են մասնակցային կառավարման ձևերի և մեխանիզմների բացեր, որոնք սահմանափակում են քաղաքացիների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի

մասնակցությունը որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործընթացներին: Սա հանգեցնում է հանրային գործընթացների նկատմամբ սեփականատիրական զգացողության պակասի, թափանցիկության և հաշվետվողականության ցածր մակարդակի, ինչպես նաև քաղաքացիների վստահության նվազման պետական կառավարման համակարգի հանդեպ:

Հետևաբար՝

1. Անհրաժեշտ է ձևավորել **մշտական, ինստիտուցիոնալ մասնակցային կառավարման մեխանիզմներ**, որոնք կապահովեն քաղաքացիների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի պարբերական ներգրավվածությունը քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման փուլերում:

2. Պետք է հստակեցվեն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների **հաշվետվողականության և հանրային մասնակցության ձևաչափերը**, սահմանվեն պարտադիր խորհրդատվական, հանրային լսումների և հետադարձ կապի մեխանիզմներ:

3. Անհրաժեշտ է զարգացնել պետական կառավարման համակարգի և քաղաքացիական հասարակության կարողությունները՝ մասնակցային գործընթացների արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Այս խնդիրները բնորոշ են ինչպես գործադիր իշխանության և քաղաքացիների, այնպես էլ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների միջև փոխհարաբերություններին: Հետևաբար, հանձնառությունը միտված է ձևավորել **բաց, մասնակցային և հաշվետու կառավարման համակարգ**, որը կբարձրացնի պետական քաղաքականությունների որակը և հանրային վստահությունը պետության նկատմամբ:

2. Որո՞նք են խնդրի պատճառները:

Մասնակցային կառավարման համակարգի թուլության հիմնական պատճառները կապված են քաղաքական և ինստիտուցիոնալ հիմքերի բացակայության, ինչպես նաև համակարգային մոտեցման և միասնական պետական քաղաքականության չձևավորված լինելու հետ: Ներկայումս կառավարության և պետական մարմինների մակարդակներում մշակված չեն մասնակցային կառավարման հստակ սկզբունքներ, ռազմավարություն և մեխանիզմներ, որոնք կապահովեն քաղաքացիների և քաղաքացիական հասարակության համակարգված ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում:

Քաղաքացիների, համայնքների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը հիմնականում կրում է անկանոն և ոչ ինստիտուցիոնալ բնույթ. այն կախված է առանձին նախաձեռնություններից կամ միջազգային պարտավորություններից, այլ ոչ թե ազգային մասնակցային կառավարման քաղաքականությունից:

Հանձնառության նկարագրություն

1. **Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար:**

Մասնակցային կառավարման ուղղությամբ Հայաստանում վերջին տարիներին կատարվել են մի շարք կարևոր քայլեր՝ նպատակ ունենալով ստեղծել քաղաքացիների և կառավարության միջև համակարգված համագործակցության և երկխոսության հարթակներ:

Մասնավորապես՝ **մշակվել և ներդրվել է նախարարներին և Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհուրդների ձևավորման կարգը և աշխատակարգը**, ինչը հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, փորձագետներին և շահագրգիռ կողմերին ներգրավվել պետական քաղաքականությունների քննարկման, մշակման և գնահատման գործընթացներում: Այս խորհուրդները կարևոր նախադրյալ են՝ գործադիր իշխանության մակարդակում պարբերական և կառուցվածքային մասնակցային մեխանիզմների ձևավորման համար: Վարչապետի աշխատակազմում ձևավորվել է **Մասնակցային և բաց հարցերի վարչությունը**՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 1204-Լ որոշմամբ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում գործում է նաև «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված իրավական կարգավորումները՝ տեղեկատվության մատչելիության և հրապարակայնության ապահովման համար: Սակայն այդ իրավական ակտերը հիմնականում ուղղված են տեղեկատվության տրամադրմանը և թափանցիկության ապահովմանը, ոչ թե քաղաքացիների և քաղաքացիական հասարակության **ակտիվ մասնակցությանը քաղաքականությունների ձևավորման և որոշումների կայացման փուլերում**:

Այսպիսով, չնայած առկա իրավական և ինստիտուցիոնալ հիմքերին, դեռևս բացակայում է միասնական և համակարգված մասնակցային կառավարման քաղաքականություն, որը կապահովի քաղաքացիների ներգրավվածության շարունակականությունը, կառավարման գործընթացների ազդեցիկությունը և հանրային վստահության բարձրացումը:

2. Ի՞նչ լուծում ենք առաջարկում:

Առաջարկվող լուծումները հետևյալն են.

1) **Գործող մասնակցային մեխանիզմների վերլուծություն և բարելավման ուղղությամբ քայլերի ձեռնարկում**:

2) **Մշակել և ներդնել կառավարության միասնական մասնակցային կառավարման ուղեցույցեր**, որոնք կապահովեն.

հանրային խորհրդակցությունների, լսումների և համատեղ աշխատանքային հարթակների կանոնակարգված անցկացում,

քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համակարգված ներգրավվածություն և հաղորդակցում քաղաքականությունների մշակման և գնահատման փուլերում,

պետական մարմինների հաշվետվողականության և հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ:

Այս մոդելը պետք է դառնա կառավարության գործունեության անբաժան բաղադրիչ՝ նպաստելով քաղաքականությունների որակի բարձրացմանը, հանրային վստահության ամրապնդմանը և պետություն–քաղաքացի հարաբերությունների զարգացմանը՝ մասնակցային, բաց և ներառական սկզբունքներով:

3. Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը:

Ակնկալվող արդյունքներն են.

1. **Մասնակցային կառավարման ազգային ինստիտուցիոնալ ճարտարապետության ձևավորում**, որը կսահմանի մասնակցային գործընթացների սկզբունքները, դերակատարների պատասխանատվությունները և ներգրավման ձևաչափերը՝ պետական կառավարման բոլոր մակարդակներում:

2. **Հանրային քաղաքականությունների մշակման փուլերում քաղաքացիների, փորձագետների և քաղաքացիական հասարակության պարբերական ներգրավման մեխանիզմների ներդրում**, ներառյալ հանրային խորհրդակցություններ, լսումներ, համատեղ աշխատանքային խմբեր և թվային մասնակցային հարթակներ:

3. **Մասնակցային կառավարման միասնական ուղեցույցների և վարքականոնների մշակում**, որոնք կապահովեն

գործընթացների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և բոլոր շահագրգիռ կողմերի հավասար մասնակցությունը:

4. **Կառավարման համակարգում նորարարական մասնակցային մոդելի ներդրում**, որը բաղկացած կլինի հստակ մեթոդաբանությունից, գործիքակազմից և թվային լուծումներից՝ քաղաքացիների հետ երկկողմանի և շարունակական փոխազդեցությունը ապահովելու համար:

Վերջնական արդյունք՝ պետական կառավարման համակարգի բոլոր մակարդակներում կձևավորվի բաց, հաշվետու և մասնակցային կառավարման մշակույթ, որի շնորհիվ քաղաքացիների վստահությունը պետության նկատմամբ կբարձրանա, որոշումների կայացման որակը կբարելավվի, իսկ հանրային քաղաքականությունները՝ կդառնան ավելի արդար, ներառական և հիմնավորված հանրային կարիքներով:

Հանձնառության վերլուծություն	
Հարցեր	**Պատասխան**
1. Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	Կստեղծվեն հանրային խորհրդակցությունների, բաց տվյալների և թվային մասնակցային հարթակների մեխանիզմներ, որոնք կապահովեն որոշումների գործընթացների բաց և հասկանալի ընթացք:
2. Ինչպե՞ս հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվողականությունը:	Պետական մարմինները կունենան պարբերական հաշվետվության և հանրային քննարկումների պարտադիր ձևաչափեր՝ ամրապնդելով հանրային վերահսկողությունը:

3. Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքացիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիթորինգին:	Քաղաքացիներն ու ՔՀԿ-ները ներգրավվելու են քաղաքականությունների մշակման, իրականացման և մոնիթորինգի փուլերում՝ շնորհիվ հաստատված մասնակցային մեխանիզմների և թվային հարթակների:

Հանձնառության պլանավորում

Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**		
Գործողություն 1. Միջազգային և Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կող-մերի հետ համա-	Ուսումնասիրել լավագույն մասնակցային կառավարման մոդելները, ձևավորել մասնագիտական համագործակցություն	2026 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Վարչապետի աշխատակազմ		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**

գործակցություն:	Հայաստանում և միջազ-գային փորձագետների, ՔՀԿ-ների հետ:		Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Պետական կառավարման համակարգի մարմիններ, ՏԻ մարմիններ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Հանրային լրագրության ակումբ» ՀԿ «Կ.Ե.Տ.» ՀԿ Այլ ՀԿ-ներ	Եվրոպական միության և այլ միջազգային մասնագիտական և դոնոր կազմակերպու-թյուններ:
Գործողություն 2. Մասնակցային կառավարման հիմքերի ձևավորում	Վերլուծել ներկա մասնակցային գործընթացները և մշակել Հայաստանի մասնակցային կառավարման ռազմավարության հայեցակարգային հիմքերը	2026 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Վարչապետի աշխատակազմ		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Պետական կառավարման համակարգի մարմիններ, ՏԻ մարմիններ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Հանրային լրագրության ակումբ» ՀԿ «Կ.Ե.Տ.» ՀԿ Այլ ՀԿ-ներ	Եվրոպական միության և այլ միջազգային մասնագիտական և դոնոր կազմակեր-պություններ

Գործողություն 3. Պետական կառավարման համակարգում կարողությունների ձևավորում	Զարգացնել պետական կառավարման կարողություններ և հմտություններ: Համագործակցել ՔՀԿ-ների և միջազգային գործընկերների հետ:	2027 թ. 1-ին կիսամյակ	**Պատասխանատու՝** Վարչապետի աշխատակազմ		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Վարչապետի աշխատակազմ Փոխվարչապե-տերի գրասենյակ-ներ Պետական կառավարման համակարգի մարմիններ, ՏԻ մարմիններ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Հանրային լրագրության ակումբ» ՀԿ «Կ.Ե.Տ.» ՀԿ Այլ հասարա-կական կազմակեր-պություններ	Միջազգային մասնագիտական և դոնոր կազմակեր-պություններ
Գործողություն 4. Մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման	Կհստակեցնի հանրային մասնակցության ընթացակարգերը քաղաքականությունների մշակման հարցում, կմշակվեն ուղեցույցներ և մեթոդներ այս	2027 թ. 2-ին կիսամյակ	Վարչապետի աշխատակազմ Փոխվարչապետե-րի գրասենյակներ Պետական կառավարման	«Թրանսփա-ռենսի ինթերնեյշնլ հակակոռուպ-ցիոն» հասարակական կազմակերպու-	Միջազգային մասնագիտական և դոնոր կազմակեր-պություններ

ուղեցույցերի մշակում:	ուղղությամբ, պետական մարմիններում կզարգացվի համապատասխան կարողությունները և պատասխանատուների շրջանակը:		համակարգի մարմիններ, ՏԻ մարմիններ	թյուն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-թյուն «Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպու-թյուն «Կ.Ե.Տ.» հասարակական կազմակերպու-թյուն Այլ հասարակական կազմակերպու-թյուններ	

Հանձնառության կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ միջազգային գործընթացների հետ	Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն:	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր՝ «6. Ինստիտուցիոնալ զարգացում»:	Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-ոդ փուլի զեկույց»:	Կայուն զարգացման նպատակ 16 Խաղաղություն, արդարություն և ամուր հաստա-տություններ. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարա-կությունների կառուցումը:	

Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Հանձնառության համարը և անվանումը	**3. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. Ինքնաշխատ եղանակով իրական շահառուների տվյալների փոխանցում**
Հանձնառության կարճ նկարագիրը	Մշակել և ներդնել էլեկտրոնային գնումների նոր համակարգ, որը պետք է՝ 1. Ապահովի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ենթաօրենսդրական իրավական ակտերով սահմանված պահանջների ինքնաշխատ համապատասխանություն՝ գնումների գործընթացներում (Automatic compliance enforcement): 2. Հնարավորինս ավտոմատացնի պատվիրատուների և մասնակիցների գործառույթները (Automation of all key business processes): 3. Ապահովի տվյալների մշակումը հնարավորինս մեքենայական լեզվով (machine readability): 4. Երաշխավորի տվյալների և տեղեկատվության (data and information) արդյունավետ հասանելիություն հանրության և քաղաքականություն մշակող մարմինների համար: 5. Պլատֆորմային տրամաբանության շրջանակներում թվային միջավայրի գործարկման միջոցով

	բարձրացնի պատվիրատու-մասնակից փոխգործակցության արդյունավետությունը՝ նվազագույնի հասցնելով ընթացակարգերին «ծանոթ» լինելու, որպես մրցակցային առավելության դերը: Մասնավորապես. ○ Թվային «խանութ» ○ Փափուկ իտերատիվ ստանդարտներ ○ Այլ պլատֆորմային լուծումներ 6. Ապահովի գործող գանձապետական համակարգերի հետ փոխգործելիություն՝ նվազեցնելով գործառնական ռիսկերը: 7. Ռիսկերի բացահայտման ինքնաշխատ համակարգի միջոցով բարձրացնի պատկան մարմինների աշխատանքի արդյունավետությունը: 8. Ապահովի գնումների պայմանագրերի կառավարման թվային միջավայր: 9. Երաշխավորի փոխգործելիություն ինչպես պետական (օրինակ՝ «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի» այլ մոդուլներ, Արդարադատության նախարարության պետական ռեգիստր (Իրական շահառուների հայտարարագրեի ռեեստր), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրման համակարգի և այլն), այնպես և մասնավոր (օրինակ՝ բանկային) համակարգերի հետ: 10. Ապահովի գնումների գործընթացում կայացվող բոլոր որոշումների անհրաժեշտ հետագծելիություն: 11. Հնարավորություն ընձեռի մասնավոր մոդուլների ինտեգրման համար: 12. Ազդարարման հարթակի միջոցով կապահովի շահագրգիռ անձանց կողմից խնդիրների արձանագրման հնարավորություն (օրինակ՝ տեքստեր, նկարներ և տեսանյութեր) ըստ պայմանագրի և այն կնքած անձանց (պատվիրատու, կապալառու)՝ տեղորոշման հնարավորությամբ: Պայմանագրերի խնդիրների արձանագրման վերաբերյալ հանրային հաշվետվողականության ձևավորման հնարավորություն:		
Պատասխանատու մարմինը	Ֆինանսների նախարարություն		
Այլ համակատարող-ներ	**Կառավարություն**	**Քաղաքացիական հասարակություն**	**Այլ մասնակիցներ**

	Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ) «ԷԿԵՆԳ» ՓԲԸ՝ (համաձայնությամբ):	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն «Թրանսպարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն «ՀԿ կենտրոն» հասարակական կազմակերպություն Այլ հասարակական կազմակերպություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններ:	
Ժամանակահատվածը	2025 թ. հունիս – 2027 թ. դեկտեմբեր		

Խնդրի սահմանումը
1. Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը: Գնումների համակարգի թափանցիկության և արդյունավետության աստիճանի բարձրացում, համակարգի օգտագործում բոլոր պատվիրատուների կողմից, էլեկտրոնային գնումների ժամանակակից, լիարժեք, բոլոր բիզնես գործընթացները ներառող և գնումների համակարգին առնչվող այլ համակարգերի հետ ինտեգրված նոր ազգային համակարգի առկայություն: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է իրականացնելու Իրական շահառուների ինստիտուտի ներդրում, ուստի համապարփակությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել փոխգործելիությունը տվյալները նույնականացնելու համար:
2. Որո՞նք են խնդրի պատճառները: Գործող համակարգը չի ապահովում հնարավորություն ներառելու բոլոր պատվիրատուներին, հնարավոր չէ լիարժեք ապահովել ինչպես բոլոր բիզնես գործընթացների, այնպես էլ բաց տվյալների վրա հիմնված տեղեկատվության ստացում: Չնայած այն փաստի, որ Հայաստանում ներդրվել է իրական շահառուների բացահայտման գործընթացը, սակայն կատարված քայլերն անհրաժեշտ չեն լիարժեքորեն հասնելու կոռուպցիոն գործընթացների կրճատմանը: Անհրաժեշտություն է առաջանում ապահովել փոխգործելիություն Հայաստանում գործող այլ համակարգերի և ռեգիստրների հետ

Հանձնառության նկարագրություն
1. Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար: 2023թ. ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները: Փաստաթուղթը 2023թ. մայիս ամսին դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են դրա քննարկման և խմբագրման աշխատանքները: Տեխնիկական առաջադրանքը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով մշակվել և հաստատվել է գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որի հաստատումից հետո հայտարարվել է երկփուլ մրցույթ: Նախարարակավորվել են թվով չորս կազմակերպություններ՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ 2025թ.-ի հունվարի դրությամբ ավարտվել են առաջին փուլի ամփոփիչ բանակցությունները և կազմակերպություններին է ներկայացվել վերջնական տեխնիկական առաջադրանքը: Նախարարակավորման մասնակիցների կողմից ներկայացված առաջարկությունների ընդունելի համարված մասը ներառվել է տեխնիկական առաջադրանքում: Մրցույթի հանձնաժողովի 2025թ.-ի մարտի 27-ի նիստում

հաստատվել է մրցույթի 2-րդ փուլի հրավերը և տրամադրվել նախաորակավորված մասնակիցներին: Մասնակիցների հայտերը բացվել են և ներկայումս գնահատման փուլում են: : Ավարտվել է մասնակիցների հայտերի գնահատումը: Ընտրվել է հաղթող մասնակից: Նախատեսվում է մինչև 2025թ. ավարտը կնքել պայմանագիր:
2. Ի՞նչ լուծում ենք առաջարկում: Մշակել արդի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գնումների նոր համակարգ՝ հիմնված հանձնառության նկարագրության մեջ նշված սկզբունքների վրա:
3. Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը: Ունենալ հանձնառության նկարագրության մեջ նշված սկզբունքների վրա հիմնված էլեկտրոնային գնումների համակարգ:

Հանձնառության վերլուծություն	
Հարցեր	**Պատասխան**
1. Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	Բաց տվյալների վրա հիմնված էլեկտրոնային գնումների համակարգը հնարավորություն կընձեռի անվճար և ավտոմատ եղանակով համացանցում հասանելի դարձնել գնման ընթացակարգերի կազմակերպման և պայմանագրերի կառավարման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:
2. Ինչպե՞ս հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվողականությունը:	Գնումներին մասնակցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիությունը, Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացումը և հաղթող կազմակերպության վերաբերյալ հանրային տեղեկատվության տրամադրումը կբարելավի հաշվետվողականությունը և որոշումների կայացման թափանցիկությունը:
3. Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքացիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիթորինգին:	ՔՀ կազմակերպությունների, լրատվամիջոցների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ ունեն հնարավորություն պարբերաբար ուսումնասիրելու և վերլուծելու գնումների գործընթացը և դրա արդյունքում շահող կազմակերպությունների կողմից պարտականությունների իրականացումը: Արդյունքում՝ հնարավոր կլինի իրականացնել հանրային վերահսկում գնումներին առնչվող բոլոր փուլերում կատարված գործողությունների և կայացված որոշումների համար՝ հետագծելիության հնարավորությամբ:

Հանձնառության պլանավորում					
Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**		
Գործողություն 1. Թեսթավորման աշխատանքների մեկնարկում	Ընտրված կապալառուի կողմից ծրագրային ապահովման մշակում և թեսթավորման աշխատանքների մեկնարկում	2027 թ. հուլիս	**Պատասխանատու՝** Ֆինանսների նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն «ՀԿ կենտրոն» հասարակական կազմակերպություն Այլ հասարակական կազմակերպություններ և	

				կազմակերպություններ	
Գործողություն 2. Իրական շահառուների ռեգիստրի հետ ինտեգրում	Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ինտեգրում Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց Իրական շահառուների ռեգիստրի ծրագրի հետ՝ գնման ընթացակարգերին մասնակցության հայտեր ներկայացրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրական շահառունեի վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ եղանակով ստացում, հրապարակում	2027թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Ֆինանսների նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն «ՀԿ կենտրոն» հասարակական կազմակերպություն Այլ հասարակական կազմակերպություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններ	«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ

	համացանցում, անհրաժեշտության դեպքում՝ տվյալների փոխանակումը Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով:				
Գործողություն 3. Գնումների գործընթացին մասնակցած կազմակերպությունների տվյալների (այդ թվում՝ իրական շահառուի հայտարարագրի) փոխանցում:	Գնումների գործընթացին մասնակից կազմակերպությունների ամբողջական տեղեկատվության (այդ թվում՝ իրական շահառուի հայտարարագրի) ինտեգրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործող հայտարարագրման համակարգ:	2027թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Ֆինանսների նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Արդարադատության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ «ՀԿ կենտրոն» հասարակական կազմակերպություն Այլ հասարակական կազմակերպություններ	

				և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններ	
Հանձնառության կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ միջազգային գործընթացների հետ	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ «Պետական ծախսեր» բաժին	«Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների» ռազմավարությունից (Թիրախ՝ 14)	«ՏՀՀԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի 2025 թվականի ՀՀ առաջընթացի զեկույց»:	Ամերիկայի միացյալ նահանգների Ներդրումային կլիմայի մասին հայտարարություններ 2021 զեկույց՝ https://cutt.ly/rKmcY3C	«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023–2026 թվականների գործողությունների ծրագիր» բառերով և տեղադրել հետևյալ հղումը:
Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն:	Կայուն զարգացման նպատակ 10 Անհավասարությունների կրճատում Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև: Կայուն զարգացման				

	նպատակ 16 Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասա-ռակությունների կառուցումը:	

Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Հանձնառության համարը և անվանումը	**4. Տեղական մակարդակում հանրային մասնակցության մեխանիզմների ներդրում և ամրապնդում**
Հանձնառության կարճ նկարագիրը	Հանձնառությունը նպատակ ունի խթանել հանրային մասնակցությունը տեղական մակարդակում՝ ապահովելով բաց, հաշվետու և համագործակցային կառավարման մշակույթի ձևավորում: Այն ուղղված է մասնակցային կառավարման ժամանակակից գործիքների ներդրմանը, գործող մեխանիզմների ինստիտուցիոնալացմանը և կատարելագործմանը, ինչպես նաև քաղաքացիների և քաղաքացիական հասարակության շարունակական ու արդյունավետ ներգրավվածության ապահովմանը համայնքային որոշումների կայացման գործընթացում: Հանձնառության իրականացումը կնպաստի մասնակցային կառավարման մշակույթի կայուն արմատավորմանը, համայնքների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, ինչպես նաև թափանցիկության, հաշվետվողականության և հանրային ծառայությունների որակի բարելավմանը՝ ձևավորելով քաղաքացիակենտրոն և համագործակցային կառավարման նոր չափանիշներ տեղական մակարդակում:
Պատասխանատու մարմինը	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Այլ համակարգողներ	Տեղական ինքնակառավարման մարմիններ, Ֆինանսների նախարարություն, «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Աջակցող կազմակերպություններ	Գերմանական միջազգային համագործակցության գործակալություն (GIZ), Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP), Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ
Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը:	Չնայած վերջին տարիներին իրականացված բարեփոխումներին, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում հանրային մասնակցությունը խթանելու նպատակով կատարված լրացումներին, մասնակցային բյուջետավորման

	պիլոտային ներդրմանը՝ Հայաստանի համայնքներում քաղաքացիների մասնակցությունը ապահովող մեխանիզմները դեռևս բարելավման կարիք ունեն: Մասնակցային բյուջետավորման գործընթացը դեռևս կամավոր է, բացակայում են գործընթացի հանրային մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ: Քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև հետադարձ կապի գործիքները սահմանափակ են, ինչը խոչընդոտում է գործընթացների լիարժեք թափանցիկության ապահովմանը, խնդիրների վաղ հայտնաբերմանը, քաղաքացիների առաջարկների, ներկայացրած խնդիրների համակարգված հաշվառմանը և հանրային վերահսկողության արդյունավետ իրագործմանը: Համայնքապետարանների կողմից մատուցվող ծառայությունները բավարար չափով չեն արտացոլում քաղաքացիների իրական կարիքներն ու սպասելիքները: Ծառայությունների նախագծման գործընթացը հազվադեպ է հիմնվում հանրային մասնակցության և համատեղ նախագծման սկզբունքների վրա, բացակայում է ծառայությունների արդյունավետության և հանրային ընկալման գնահատման գործիք, ինչի հետևանքով համայնքապետարանները հաճախ չեն ունենում բավարար տվյալներ՝ հիմնավորված որոշումներ կայացնելու և ծառայությունների որակը բարելավելու համար: Այս բացը ոչ միայն սահմանափակում է քաղաքացիների ներգրավվածությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում, այլև նվազեցնում է վստահությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ ձևավորելով պասիվ մասնակցության մշակույթ, որն էլ իր հերթին խոչընդոտում է արդյունավետ և հաշվետու տեղական ինքնակառավարման կայացմանը:
Որո՞նք են խնդրի պատճառները:	Խնդրի հիմնական պատճառներն են. Գործող մասնակցային մեխանիզմների ոչ լիարժեք ինստիտուցիոնալացում, ինչի հետևանքով դրանք չեն ապահովում գործընթացների կայունություն և շարունակականություն: Քաղաքացիների կարիքների ուսումնասիրության և տվյալահեն որոշումների պակաս, ինչի հետևանքով համայնքային ծառայությունները հաճախ չեն

	արտացոլում բնակչության իրական առաջնահերթությունները: Ծառայությունների արդյունավետության և հանրային ընկալման գնահատման գործիքների բացակայություն, ինչը սահմանափակում է համայնքների կարողությունը՝ ապահովելու շարունակական բարելավում և հաշվետվողականություն: Քաղաքացիների կողմից արձանագրված խնդիրների ներկայացման, հանրայնացման և հաշվետվողականության մեխանիզմների բացակայություն, ինչը խոչընդոտում է համայնքային կառավարման թափանցիկությանը և արձագանքման արդյունավետությանը:
Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար:	Վերջին տարիներին ձեռնարկվել են մի շարք քայլեր՝ ուղղված տեղական մակարդակում հանրային մասնակցության խթանմանը և բաց կառավարման մշակույթի զարգացմանը: Մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարված լրացումներով ամրագրվել են հանրային մասնակցությունը խթանող մի շարք կարևոր դրույթներ, ինչպիսին են՝ համայնքային կայքերում տեղեկատվության թափանցիկության ապահովում, ավագանու նիստերի առցանց հեռարձակման, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման պահանջների ամրագրում և այլն: Մի շարք համայնքներում հաջողությամբ ներդրվել և իրականացվել է մասնակցային բյուջետավորման գործընթացը, որը հնարավորություն է տվել քաղաքացիներին ձևավորել ծրագրային առաջարկներ և ուղիղ քվեարկությամբ ընտրել դրանք՝ համայնքապետարանների կողմից հետագա իրականացման նպատակով: Իրականացվել են նաև կարողությունների զարգացման և իրազեկման ծրագրեր՝ ուղղված հանրային մասնակցության մեխանիզմների արդյունավետ կիրառմանն ու բաց կառավարման սկզբունքների տարածմանը:

Ի՞նչ լուծում եք առաջարկում:	Առաջարկվող լուծումը նպատակ ունի ներդնել նոր, ինչպես նաև ամրապնդել հանրային մասնակցայնության առկա գործիքները տեղական մակարդակում: Հանձնառությունը ներառում է մասնակցային բյուջետավորման իրավական, ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդում, գործընթացի հանրային մոնիթորինգի մեխանիզմների ներդրում: Միաժամանակ նախատեսվում է ներդնել քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման հարթակ՝ ապահովելու համար երկկողմ հաղորդակցություն և արագ արձագանքման մեխանիզմ տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների միջև: Հանձնառությունը նաև ուղղված է քաղաքացիակենտրոն ծառայությունների համանախագծման, ինչպես նաև ծառայությունների գնահատման մեխանիզմների ներդրմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել համայնքային ծառայությունների որակը և դրանց համապատասխանությունը բնակչության իրական կարիքներին:
Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը:	Հանձնառության իրականացումը կնպաստի տեղական մակարդակում մասնակցային կառավարման համակարգի զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև վստահության, թափանցիկության և համագործակցության մշակույթի ձևավորմանը: Ակնկալվում է, որ հանձնառության իրականացման արդյունքում. • մասնակցային բյուջետավորումը կդառնա կայուն և ինստիտուցիոնալ գործիք: • կգործարկվի քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման հարթակ, որը կապահովի երկկողմ հաղորդակցություն և արագ արձագանք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: («Տեսել եմ» բջջային հավելվածի ներդրում) • կձևավորվեն քաղաքացիակենտրոն ծառայությունների համանախագծման

	մեխանիզմներ, որոնք թույլ կտան համայնքապետարաններին նախագծել և մատուցել ծառայություններ՝ հիմնված բնակչության իրական կարիքների և արձագանքների վրա: • Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում կներդրվի համայնքային ոլորտային ծառայությունների գնահատման նոր գործիք՝ թվային ենթահամակարգ, որը հնարավորություն կտա քաղաքացիների կողմից գնահատել հանրային ծառայությունների արդյունավետությունը, մատչելիությունը և համապատասխանությունը քաղաքացիների կարիքներին: Արդյունքում կձևավորվի բաց, հաշվետու և մասնակցային տեղական կառավարում, որտեղ քաղաքացիները ոչ միայն համայնքային ծառայությունների օգտվողներն են, այլև մասնակցում են դրանց ձևավորմանը, գնահատմանը և շարունակական բարելավմանը:
Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	Հանձնառությունը նպատակ ունի խթանել տեղական ինքնակառավարման համակարգի բաց, թափանցիկ և քաղաքացիակենտրոն կառավարումը՝ ձևավորելով կայուն մեխանիզմներ քաղաքացիների համար՝ մասնակցելու համայնքային որոշումների կայացմանը, հանրային ծառայությունների համատեղ նախագծման և գնահատման աշխատանքներին: Մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալացումը և դրա հանրային մոնիթորինգի համակարգի ներդրումը կապահովեն բյուջետային գործընթացների թափանցիկություն՝ սկսած ծրագրերի ներկայացումից, քվեարկությունից, մինչև դրանց իրականացում: Սա հնարավորություն կտա քաղաքացիներին ոչ միայն տեղեկանալ, այլև հետևել համայնքային միջոցների բաշխման և օգտագործման արդյունավետությանը՝ ստեղծելով հանրային վերահսկողության նոր մակարդակ: Քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման հարթակի գործարկումը կնվազեցնի տեղեկատվական խոչընդոտները և կապահովի բաց, տեսանելի և հաշվետու հաղորդակցություն համայնքների և բնակչության միջև:

	Հարթակը հնարավորություն կտա իրական ժամանակում դիտարկել բարձրացված խնդիրները, համայնքապետարանների կողմից դրանց արձագանքը, ինչը կբարձրացնի ինչպես կառավարման թափանցիկությունը, այնպես էլ հանրային վստահությունը ՏԻՄ մարմինների նկատմամբ: Համայնքային ոլորտային ծառայությունների գնահատման համակարգի ներդրումը կապահովի ծառայությունների արդյունավետության, մատչելիության և որակի վերաբերյալ բաց տվյալների հրապարակում:
Ինչպե՞ս է հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվողականությունը:	Հանձնառությունը նպատակ ունի բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը՝ ձևավորելով այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն քաղաքացիների շարունակական վերահսկողությունը համայնքային որոշումների, բյուջետային գործընթացների և ծառայությունների նախագծման ու տրամադրման նկատմամբ: Մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալացումը և հանրային մոնիթորինգի համակարգի ներդրումը կստեղծեն հնարավորություն քաղաքացիների համար՝ հետևելու համայնքային միջոցների բաշխմանը, գործընթացի բոլոր փուլերի իրականացմանը, ընտրված ծրագրերի իրագործմանն ու դրանց արդյունքներին Քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման հարթակը կապահովի ոչ միայն թափանցիկ հաղորդակցություն, այլև կձևավորի պատասխանատվության մեխանիզմ՝ հնարավորություն տալով հետևել բարձրացված հարցերի լուծման ընթացքին: Սա կնպաստի վստահության բարձրացմանը և կառավարման մշակույթի փոփոխությանը՝ ուղղված արագ, փաստահեն և հաշվետու արձագանքին: Քաղաքացիների կողմից հանրային ծառայությունների գնահատման համակարգը կնպաստի ծառայությունների որակի և արդյունավետության պարբերական գնահատմանն ու արդյունքների հրապարակմանը՝ ստեղծելով

	պատասխանատվության լրացուցիչ մեխանիզմ:
Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքացիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիտորինգին:	Հանձնառությունը ուղղված է քաղաքացիների մասնակցության ինստիտուցիոնալ ամրապնդմանը և նոր մեխանիզմների ձևավորմանը, որոնք հնարավորություն կտան քաղաքացիներին մասնակցել համայնքային որոշումների կայացմանը, հանրային ծառայությունների նախագծմանն ու դրանց գնահատմանը: Մասնակցային բյուջետավորման համակարգի ինստիտուցիոնալացումը կապահովի գործընթացի կայունությունն ու շարունակականությունը՝ քաղաքացիներին դարձնելով ոչ թե համայնքային որոշումների պասիվ դիտորդ, այլ որոշումների համանախաձեռնող: Քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման հարթակը կվերածի արձագանքման և հետադարձ կապի տրամադրման գործընթացը բաց, փոխադարձ և վերահսկելի ձևաչափի, որտեղ քաղաքացիները կարող են ոչ միայն բարձրացնել խնդիրներ, այլև հետևել դրանց լուծման ընթացքին: Համայնքային ծառայությունների համանախագծման մեխանիզմների ներդրումը կերաշխավորի, որ համայնքային ծառայությունները ձևավորվեն քաղաքացիների իրական կարիքների և առաջնահերթությունների հիման վրա՝ համատեղ քննարկումների, փորձարկումների և արձագանքների միջոցով: Այս մոտեցումը կդարձնի քաղաքացիներին ոչ թե պարզապես ծառայությունների սպառող, այլ՝ դրանց ձևավորման և բարելավման ակտիվ մասնակից: Միևնույն ժամանակ, ծառայությունների գնահատման մեխանիզմների ներդրումը կապահովի քաղաքացիների մասնակցությունը համայնքային ծառայությունների արդյունավետության, մատչելիության և որակի մշտադիտարկման և վերլուծության գործընթացին՝ հնարավորություն տալով ձևավորել շարունակական հետադարձ կապ և խթանել տվյալահեն բարելավումներ:

Հանձնառության պլանավորում					
Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**		
Գործողություն 1.	Մասնակցային բյուջետավոր-ման ինստի-տուցիո-նալացում և հա-մապատասխան փոփոխություն-ների ամրագրում «Տեղական ինքնակառա-վարման մասին» և «Հայաստանի Հանրապետու-թյան բյուջետային համակարգի մասին»	2027 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր՝</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ (Խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**
			Տեղական ինքնակառավարման մարմիններ	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

	օրենքներում: «Տեղական ինքնակառա-վարման մասին» օրենքում սահմանվել է իրավակարգա-վորում, որով նախատեսվել է ծախսային հոդվածի մեկ տոկոսը հատկացնել գործընթացի իրա-կանացմանը, իսկ «Հայաստանի Հանրապետու-թյան բյուջետային համակարգի մասին» օրենքում սահմանվել են				

	մասնակցային բյուջետավոր-ման հասկացության և կիրառման մասին դրույթներ: Մասնակցային բյուջետավորման գործընթացի հանրային մշտադիտարկ-ման մեխանիզմների ներդրում և փորձարկում 6 համայնքներում				
Գործողություն 2.	Քաղաքացիների կողմից խնդիրների արձանագրման և հաղորդման	2027 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու**		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ (խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**

	հարթակի ներդրում: («Տեսել եմ» բջջային հավելվածի ներդրում բոլոր հա-մայնքներում):		Տեղական ինքնակառավարման մարմիններ	«Տեղեկատվական համակարգերի զար-գացման և վերապատ-րաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
Գործողություն 3.	Համայնքային ծառայություն-ների համանախա-գծման մեխանիզմների ներդրում պիլոտային 6 համայնքներում:	2027 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու**		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ (խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**
			Տեղական ինքնակառավարման մարմիններ	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
Գործողություն 4.	Համայնքային ոլորտային ծառայություն-ների գնահատման	2027 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու**		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ (խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**

	թվային ենթահամա-կարգի մշակում և ներդրում պիլոտային 5 համայնքներում		Տեղական ինքնակառավարման մարմիններ	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

Հանձնառության կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ միջազգային գործընթացների հետ	Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հիմնական ուղղություններից՝ հանրային հաղորդակցության և մասնակցության ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր՝ 6. Ինստիտուցիոնալ զարգացում՝ «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնի հետ, որում կարևորվում է, մասնավորապես, հանրային ռեսուրսների կառավարման և հասցեականության բարձրացումը:	«Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների» ռազմավարությունից (Թիրախ՝ 21):	ՏՀԶԿ առաջարկ՝ ՀՀ-ում բարելա-վելու տեղեկա-տվության հասանելիություն ու հանրային հաղորդակցում	Կայուն զարգացման նպատակ 11 Կայուն քաղաքներ և համայնքներ Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն Կայուն զարգացման նպատակ 16 Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը:

					Կայուն զարգացման նպատակ 17 Գործընկերություններ հանուն նպատակների Ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման:

Երկիր	Հայաստանի Հանրապետություն		
Հանձնառության համարը և անվանումը	**5. Հանրային ծառայության ոլորտում պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հաշվառման ռեեստրի և կոռուպցիոն ռիսկերի ավտոմատ վերլուծության ավտոմատ համակարգ**		
Հանձնառության կարճ նկարագիրը	1. Բարեվարքության համակարգի մաս կազմող նվերների հաշվառման հայտարարագրման և հրապարակման թվայնացված ռեեստրի ստեղծում. 2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ Հանձնաժողով) տարբեր գործառույթների, այդ թվում՝ հայտարարագրերի ստուգման և վերլուծության, կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության վերահսկողության, բարեվարքության համակարգի պահպանման, նվերների սահմանափակումների պահպանման շրջանակներում հավաքագրվող տվյալների միջև փոխգործելիության ապահովում և դրա շնորհիվ բանաձևերի միջոցով ռիսկային ցուցիչների դուրսբերում:		
Պատասխանատու մարմինը	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		
Այլ համակատարողներ	**Կառավարություն**	**Քաղաքացիական հասարակություն**	**Այլ մասնակիցներ**

	Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ Պետական կառավարման համակարգի մարմիններ	«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ Այլ ՀԿ-ներ և կազմակերպություններ, որոնք կմիանան հանձնառությանը	Միջազգային կազմակերպություններ, որոնք կմիանան և կաջակցեն հանձնառությանը
Ժամանակահատված	2026թ. հուլիս-2027 թ. սեպտեմբեր		

Խնդրի սահմանումը

1. Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը:

1. Գործող կարգավորումների շրջանակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ստացած նվերների հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով՝ առանց միասնական թվային ռեեստրի: Այս մեխանիկական գործընթացը ժամանակատար է, պահանջում է ավելորդ ռեսուրսներ և չի ապահովում նվերների արժեքի ավտոմատ գնահատում, տվյալների որոնում, համադրում և վերլուծություն: Արդյունքում՝ գործընթացը չի համապատասխանում պետության թվայնացման քաղաքականությանը և սահմանափակում է թափանցիկությունն ու արդյունավետությունը:

2. Հանձնաժողովն իրականացնում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում, գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերի ստուգում և վերլուծություն, այդ թվում նաև՝ հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների հիման վրա: Սակայն այդ գործընթացների արդյունավետությունը կախված է թվային լուծումներից և տվյալների փոխգործելիությունից, որոնք ներկայումս ամբողջությամբ ապահովված չեն:

2. Որո՞նք են խնդրի պատճառները:

1. Նախորդ գործողությունների ծրագրի հանձնառությամբ ստանձնած նվերների հաշվառման ռեեստրի կառուցման գործընթացը ժամանակավորապես դադարեցվել է ֆինանսավորման և տեխնիկական ապահովման խնդիրների հետևանքով:

2. Ռիսկերի ավտոմատացված վերլուծության տեսանկյունից Հանձնաժողովի խնդիրները հետևյալն են՝

- Տվյալների մեծ ծավալը՝ տարեկան ավելի քան 15,000 հայտարարագիր և 120+ կուսակցական տարեկան հաշվետվություն, որոնք պարունակում են մեծածավալ տվյալներ:
- Մարդկային ռեսուրսների սահմանափակում՝ աշխատակիցների թիվը չի բավարարում ամբողջ ստացվող տեղեկատվությունը ստուգելու և վերլուծելու համար:
- Ռիսկային մոտեցման ոչ ամբողջական կիրառություն՝ ներկա չափորոշիչները չափորոշիչները հիմնականում կապված են եղել անձանց զբաղեցրած պաշտոնների կամ նախորդող տարիների հայտարարագրերի վերլուծության արդյունքով դուրսբերված ռիսկային ցուցիչների, իսկ կուսակցությունների դեպքում՝ պարտադիր աուդիտի ենթակա լինելու հետ:
- Ավտոմատացման բացակայություն՝ գործընթացը հիմնականում ձեռքով է և չի կիրառում ավտոմատացված վերլուծության մեխանիզմներ, ինչը նվազեցնում է արդյունավետությունը և խոչընդոտում միջազգային ստանդարտներին համապատասխանելիությանը:

Հանձնառության նկարագրություն

1. Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար:

1. Հանձնաժողովը 2025 թվականի դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ներկայացնելով Հանձնաժողովի կողմից գործընթացների թվայնացման ոլորտում ի հայտ եկած խնդիրները՝ այդ թվում հաշվառման ռեեստրի ներդրման մասով:

2. Հանձնաժողովը մշակել է ռիսկերի ավտոմատացված վերլուծության գործիքի բովանդակային և տեխնիկական նկարագիրը, ներկայացրել այն Տեղեկատվական համակարգերի անվտանգության խորհրդին: 2024 թ. դեկտեմբերի 7-8-ը ԱՄՆ ՄԶԳ-ի և «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի հետ կազմակերպած «Տվյալներն ընդդեմ կոռուպցիայի» հաքաթոնի ընթացքում մշակվել են գործիքի կիրառելի դեմո տարբերակներ, որոնց կիրառելիությունը Հանձնաժողովի նպատակների համար գնահատվել է բավարար:

2. Ի՞նչ լուծում ենք առաջարկում:

1. Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ ավարտին հասցնել նվերների հաշվառման ռեեստրի կառուցումն ու հաշվառման գործընթացի թվայնացումը:

2. Հաշվի առնելով Կառավարության՝ պետական մարմիններում գործընթացների ընդհանուր թվայնացման և ստանդարտացման օրակարգը, ինչպես նաև Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է Հանձնաժողովի կողմից հավաքագրվող տվյալների փոխգործելիության և բանաձևերի միջոցով դրանց ավտոմատացված վերլուծության գործիքի կառուցում, դա հնարավոր դարձնելու նպատակով Հանձնաժողովին ֆինանսական միջոցների հատկացում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից՝ սույն հանձնառությունը ակնկալվող ժամկետում իրականացնելու և արդյունքում՝ Հանձնաժողովի գործառույթների իրականացումն առավել հասցեական և արդյունավետ դարձնելու նպատակով:

3. Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը:

1. Նվերների հաշվառման թվայնացված ռեեստրի ստեղծումը՝ ապահովելով ավտոմատացված հաշվառում, գնահատում, հրապարակում և համակարգի փոխգործելիություն, ինչպես նաև հեշտացնելով հանրային պաշտոնատար անձանց նվերների հաշվառման գործընթացը՝ բարձրացնելով թափանցիկությունը:
2. Հանձնաժողովի մարդկային ռեսուրսները կկենտրոնանան առավել ռիսկային հայտարարագրերի և հաշվետվությունների ստուգման վրա, իսկ ցածր ռիսկայնություն ունեցողներն ավտոմատ կերպով կվերլուծվեն համակարգի միջոցով, ինչը կբարձրացնի արդյունավետությունը, կխթանի ռեսուրսների ճիշտ օգտագործումը և կպատրաստի կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը և կանխմանը, քաղաքական ֆինանսավորման հաշվետվողականության և վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Հանձնառության վերլուծություն	
Հարցեր	**Պատասխան**
1. Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	1. Պարտավորությունը կբերի նվերների և հաշվետվությունների հրապարակայնության, բաց տվյալների հասանելիության և թափանցիկության բարձրացման՝ հնարավորություն տալով դրանց օգտագործել նաև ՔՀԿ-ներին, մեդիային և այլ շահագրգիռ կողմերին: 2. Ռիսկերի ավտոմատացված վերլուծությունը կբարձրացնի հանրային վստահությունը, քանի որ հայտարարագրերը և կուսակցությունների հաշվետվությունները կվերլուծվեն ոչ միայն անձանց դիմումների կամ մեդիա հրապարակումների հիման վրա, այլև Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ՝ նախապես սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա՝ առանց ռիսկերի որոշման գործընթացում մարդկային միջամտության: Բացի այդ, նկատի ունենալով, որ վերլուծության արդյունքները հրապարակային են՝ առավել շատ վերլուծությունների արդյունքների հրապարակումը

	կհանգեցնի ԿԿՀ վերահսկողական գործառույթների արդյունքների թափանցիկության բարձրացմանը:
2. Ինչպե՞ս հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվողականությունը:	1. Նվերների հաշվառման թվայնացված ռեեստրի ստեղծումը կապահովի նվերների հաշվառման, գնահատման և հրապարակման ավտոմատացված լուծումներ՝ հանրությանը տրամադրելով բաց և հասանելի տեղեկատվություն, ինչպես նաև հնարավորություն հաղորդում ներկայացնելու խախտումների մասին: 2. Ռիսկային չափորոշիչների վրա հիմնված վերլուծությունը կբարձրացնի Հանձնաժողովի հաշվետվողականությունը և պատասխանատվությունը հանրության առաջ, ինչպես նաև կնպաստի քաղաքական ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը և հաշվետվողականության ամրապնդմանը
3. Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքացիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիթորինգին:	Հանձնառության կարևորագույն բաղադրիչ է ներառականությունը: Հանրության սեփականատիրության բարձրացումը իրականացվող գործընթացների նկատմամբ: Պատշաճ հանրային վերահսկողություն և պահանջատիրություն միջոցառման իրականացման պատասխանատուների և հատկացվող ռեսուրսների նկատմամբ: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ քաղաքական ֆինանսավորման նկատմամբ իրականացվում է նաև հանրային վերահսկողություն, հանձնառությունը կնպաստի հանրային վերահսկողության մատչելիության բարձրացմանը և դրա համար անհրաժեշտ տեղեկությունների ավելացմանը:

Հանձնառության պլանավորում

Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**
Գործողություն 1. Էլեկտրոնային ռեեստրի ստեղծում.	1. Ռեեստրի նախագծում Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի	2026թ. սեպտեմբեր	

Փոխգործելիության ապահովում	հիման վրա: Փոխգործելիության ապահովում ոչ միայն Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի բոլոր հարթակների հետ, այլև՝ պետական կառավարման համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների հետ՝ պահանջվող տեղեկատվության ստացման նպատակով: 2. Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի ներդրում և գործարկում (իրազեկում պետական կառավարման համակարգի համար): Հանձնաժողովի կողմից նախնական իրազեկման անցկացում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների բարեվարքության հարցերով		

	կազմակերպիչների համար՝ բարեվարքության տարրերի՝ այդ թվում՝ նվերների ընդունման սահմանափակումների, օրենսդրական փոփոխությունների, գործող կարգավորումների, նվերների ընդունման արգելքի պահպանման առնչությամբ Հանձնաժողովի լիազորությունների, նվերների հաշվառման ռեեստրի ներդրման ընդհանրական տեղեկության ներկայացում: Նվերների հաշվառման ռեեստրի գործարկումից հետո Հանձնաժողովի կողմից կիրականացվեն լայնածավալ վերապատրաստումներ՝ նշված գործընթացների շուրջ իրազեկվածության բարձրացման նպատակով:		
Գործողություն 2. Ռիսկերի	1.Ռիսկերի ավտոմատացված	2027 թ.	**Պատասխանատու՝** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ավտոմատացված վերլուծության գործիքի ստեղծում	վերլուծության գործիքի տեխնիկական բնութագրերի վերանայում: 2.Ծրագրի հաստատում Տեղեկատվական համակարգերի անվտանգության խորհրդի նիստում: 3.Ֆինանսական միջոցների հատկացում և էլեկտրոնային հարթակի մրցույթի անցկացում: 4.Գործիքի կառուցում և գործարկում:	սեպտեմբեր	**<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>**		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետի գրասենյակ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ	ՀԿ-ներ և կազ-մակերպություն-ներ, որոնք կմիանան հանձնառութ-յանը	Միջազգային գործընկերներ, որոնք կմիանան և կաջակցեն հանձնառությանը
Հանձնառության կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ միջազգային գործընթացների հետ	Հավելված N 2 ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N որոշման՝ 2023-2026 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագիր	Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույց»	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության		Կայուն զարգացման նպատակ 16՝ Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակու-թյունների կառուցումը

			հանրային բարեվարքության ցուցիչների ապահովման վերաբերյալ Հայաստանի զեկույց	

3. ԲԱՑ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Հանձնառության համարը և անվանումը	**6. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք**
Հանձնառության կարճ նկարագիրը	Ներդնել էլեկտրոնային արդարադատության համակարգի «e-Court-statistics» վիճակագրական վերլուծական գործիք՝ որն ուղղված կլինի բոլոր դատական գործերի, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների քննության հետ կապված գործընթացների վերլուծության, դատական համակարգի հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը, «բաց տվյալների» ձևաչափի կիրառման ապահովման համար: «e-Court-statistics» միասնական համակարգի ներդրման նպատակներն են՝ ա) հստակ ընթացիկ պատկերացում կազմել առկա դատական գործերի պատկերի վերաբերյալ՝ ըստ տարբեր չափանիշների (գործերի տեսակներ դատավորների և դատախազների գործառույթներ, ժամկետներ, այդ թվում՝ ըստ գործերի քննության ողջ տևողության և այլն) գործեր որոնելու հնարավորությամբ, բ) ապահովել դատարանների գործունեության արդյունավետության գնահատման հնարավորությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունը՝ ըստ այդմ տարանջատելով այն տվյալները, որոնք անհրաժեշտ են դատարանների ներքին օգտագործման, աշխատանքի գնահատման

	համար, և այն տվյալները, որոնք հասանելի են երրորդ անձանց, գ) ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում, դ) միավորել դատական կոնկրետ գործին առնչվող արդարադատության մարմիններում գործող բոլոր տվյալների շտեմարանները:		
Պատասխանատու մարմինը	Արդարադատության նախարարություն		
Այլ համակատարողներ	**Կառավարություն/ Պետական այլ մարմիններ**	**Քաղաքացիական հասարակություն**	**Այլ մասնակիցներ (Խորհրդարան, մասնավոր հատված և այլն)**
	Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի կառա-վարման խորհուրդ</u> Իրավապահ համակարգի մարմիններ՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն «Թվային Հայաստան» հասարակական կազմակերպություն	Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակ ««Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա» հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)

	ծառայություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն		
Ժամանակահատված	2026 թ. հունվար-2027 թ.հունիս		

Խնդրի սահմանումը

1. Ո՞ր խնդրին է ուղղված հանձնառությունը:

Հայաստանում արդարադատության ու դատաիրավական ոլորտի բարեփոխումները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնային ուղղություններից: Այդուհանդերձ տարիներ շարունակ բարեփոխումները չեն հասել իրենց առջև դրված նպատակներին ու թիրախներին՝ որոշ դեպքերում չունենալով իրականացման համապատասխան գործուն մեխանիզմներ ու գործիքակազմ:

2022 թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագրերը: Գործողությունների ծրագրով նախատեսված է թվայնացնել գոյություն ունեցող դատավարությունները՝ տարբեր էլեկտրոնային հարթակների միասնական համակարգ:

Արդյունքում, քանի որ աստիճանաբար դատական բոլոր գործերը սկսելու են քննվել էլեկտրոնային համակարգի միջոցով, անհրաժեշտ է զուգահեռաբար ապահովել նաև համապատասխան վիճակագրական տվյալների հավաքագրման և վերհանման հնարավորությունները: Այս խնդիրը ևս հասցեագրված է նշված ռազմավարությամբ, որը նախատեսում է նաև հանրության համար հասանելի՝ առցանց ռեժիմում դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի ներդրում:

«e-Court-statistics» միասնական վիճակագրական գործիքի ներդրումը հնարավորություն կտա ապահովել ինչպես դատական վարույթում, այնպես էլ մինչդատական վարույթում առկա տվյալների հիման վրա միասնական վիճակագրական բազայի առկայությունը, ինչպես նաև տվյալների ավտոմատ գեներացումը: Նմանօրինակ հարթակի մշակումը կարևոր նշանակություն ունի իրավապահ գործընթացների առավել պարզ ու թափանցիկ կազմակերպման տեսակետից, միաժամանակ այն թույլ կտա խուսափել պրոցեսների անհարկի երկարաձգումից և հնարավորություն կընձեռի ռիսկերի վերհանման, քաղաքականության ճիշտ մշակման նպատակով վարել համապատասխան վիճակագրություն:

ԲԿԳ-Հայաստան ազգային գործողությունների ծրագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնում է «e-Court-statistics» վիճակագրական գործիքի ներդրումը, որը թույլ կտա վերլուծել մինչդատական և դատական գործերի քննության հետ կապված գործընթացները (բովանդակային և ձևական)՝ ըստ նախապես որոշված վիճակագրական ցուցանիշների (statistic data) և «բաց տվյալների» ձևաչափի կիրառմամբ: Դատական գործերի քննության հետ կապված գործընթացների վերլուծությունը հնարավորություն է ընձեռելու քաղաքացիական հասարակության անդամներին՝ հանրային վերահսկողություն իրականացնել արդարադատության իրականացման նկատմամբ: Ձևավորված վիճակագրությունն անվճար կլինի հասանելի շահագրգիռ կողմերի համար (իրավաբանական համայնք, քաղաքացի, հետազոտողներ, միջազգային կառույցներ և ոլորտային պետական մարմիններ):

Նշված վիճակագրական ցուցանիշների համատեքստում հասանելի կլինեն կոնկրետ դատավարություններով դատական գործերի քանակ, կայացված դատական ակտերի ընդհանուր քանակ, որոշակի տեսակի գործերով տոկոսային հարաբերակցություն և այլն: Զուգահեռաբար վիճակագրական գործիքի ներդրումն անհրաժեշտ է իրականացնել երկու ուղղություններով՝ հասարակության համար դատարանների գործունեության նկատմամբ վերահսկողության շրջանակներում և գործերի լուծման արդյունավետության տեսանկյունից:

2. Որո՞նք են խնդրի պատճառները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության դատական համակարգը չունի միասնական էլեկտրոնային համակարգ, որի շրջանակներում իրականացվեն բոլոր դատական վարույթները և հավաքագրվեն համապարփակ ու ամբողջական վիճակագրական

տվյալներ:

Առկա են մի քանի առանձին հնացած և մեկուսացված էլեկտրոնային գործիքներ, որոնք չեն կարող ապահովել դատավարության ամբողջական, ինքնաշխատ և օգտագործողի համար հարմարավետ թվայնացումը, ինչի պայմաններում չի կարող արդյունավետ ներդրվել և գործել վիճակագրական գործիքը:

Հարկ է նշել նաև, որ նախատեսվում է արդիականացնել դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը ևս, ինչը կարող է հաշվի առնվել սույն գործիքի մշակման համատեքստում: Ինչ վերաբերում է http://www.datalex.am/ կայքին, ապա այն ամբողջական մինչդատական և դատական վիճակագրական տեղեկատվություն, սակայն այն ամբողջական չէ գործարկման համար (friendly usable) մատչելի չէ և հնարավորություն չի տալիս առանձին կամ համակարգված որոնում իրականացնել դատական գործընթացի շահառուին (Պետական մարմիններ և դատական համակարգ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, լրագրող, հետազոտող և այլն) հետաքրքրող ցուցիչի (statistic data, indicator) վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն և տեղեկատվությունը հասանելի է Excel ֆորմատով, որը սակայն վիճակագրական տեղեկություններ է տալիս ըստ հոդվածների և ըստ դատավորների՝ ներառելով սահմանափակ ծավալի տեղեկություններ: Ընդ որում, մանրամասն տեղեկություններ նշված կտրվածքով առկա են միայն առաջին ատյանի դատարանների համար:

Բացի այդ, կոռուպցիոն հանցագործությունների և կոռուպցիոն բնույթի քաղաքացիական գործերի վերաբերյալ առանձնացված վիճակագրություն չի վարվում, ինչը հնարավորություն չի տալիս ոչ միայն ամբողջական պատկերացում կազմել կոռուպցիոն գործերի քննության ողջ շղթայի վերաբերյալ, այլև համապատասխան վիճակագրության բացակայությունը խնդրահարույց է դիտարկվել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի 2025 թվականի առաջընթացի զեկույցի շրջանակներում»՝ հանգեցնելով մի շարք կատարողական դաշտերում պարտավորությունների չկատարված գնահատվելուն: Վերոնշյալ վիճակագրական տվյալների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում վերլուծության արդյունքում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և արդյունավետ պայքար մղել կոռուպցիոն հանցագործությունների դեմ:

Այս տեսանկյունից վիճակագրական միասնական էլեկտրոնային գործիքի ներդրումը կհասցեագրի և կլուծի նշված խնդիրները:

Հանձնառության նկարագրություն

1. **Ի՞նչ է արվել մինչ այժմ խնդրի լուծման համար:**

Դատալեքսի պորտալն ունի ինֆոգրաֆիկ բաժին, որը տալիս է սահմանափակ ցուցիչներով տեղեկատվություն շահառուներին՝ գործարկման համար (friendly usable) ոչ մատչելի ձևաչափով:

Միևնույն ժամանակ, Դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունն ապահովելու նպատակով Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն՝ Կառավարության սահմանած կարգով: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանվել են դատական վիճակագրության վարմանն առնչող հարաբերությունները: e-Court պորտալն ունի վիճակագրության էջ, որը պարունակում է վիճակագրական տվյալներ Excel ֆորմատով: Դատական վիճակագրությունը Առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանի և դատավորի վերաբերյալ, ըստ գործերի տեսակների, հրապարակվում են մասնավորապես հետևյալ տվյալները.

1) դատավորների քանակը,

2) հաշվետու ժամանակահատվածի սկզբում նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերի ընդհանուր քանակը,

3) հաշվետու ժամանակահատվածում ստացված գործերի ընդհանուր քանակը,

4) հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի ընդհանուր քանակը,

5) հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ կասեցված վարույթներով գործերի ընդհանուր քանակը,

6) հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի,

7) հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ) (այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության և դատական ակտի կայացման փուլերի միջին տևողության),

8) հաշվետու ժամանակահատվածում ավարտված մինչդատական քրեական վարույթի գործերը՝ ըստ տեսակների,

9) հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ անավարտ գործերի ընդհանուր քանակը,

10) հաշվետու ժամանակահատվածում բողոքարկված դատական ակտերի քանակը՝ ըստ տեսակների,

11) հաշվետու ժամանակահատվածում բեկանված դատական ակտերի քանակը՝ ըստ տեսակների:

Բարձրացված խնդիրների լուծման նպատակով կնքվել է եռակողմ պայմանագիր Բարձագույն Դատական խորհրդի, Արդարադատության նախարարության և Դատալեքսի պորտալը սպասարկող կազմակերպության միջև:

2. Ի՞նչ լուծում ենք առաջարկում:

Առաջարկվում է մշակել և ներդնել էլեկտրոնային արդարադատության շրջանակներում դատական համակարգի գործիք, որը հնարավորություն կտա կատարել վիճակագրական և վերլուծական աշխատանքներ դատական գործընթացների վերաբերյալ՝ սկսած մինչդատական փուլից:

Սրան կարելի է հասնել գործող էլեկտրոնային համակարգերի համակցմամբ, արդարադատության ոլորտի մարմինների միջև միասնական էլեկտրոնային հաղորդակցության ներդրմամբ: Ընդ որում՝ էլեկտրոնային նախաքննության ծրագրային ապահովումը պետք է օժտված լինի անհրաժեշտ տվյալները ֆորմատավորված եղանակով տրամադրելու գործիքակազմով, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում էլեկտրոնային նախաքննությունը համակարգող մարմինը համապատասխանեցնում է համակարգը «e-Court-statistics» վիճակագրական գործիքի պահանջներին՝ միասնական վիճակագրական տվյալներ ստանալու համար:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է կատարելագործել գործող վիճակագրական տողերը և վիճակագրական քարտերը:

Բացի այդ, միջազգային պարտավորություններին համապատասխան՝ անհրաժեշտ է նախատեսել կոռուպցիոն գործերի համար առանձնացված վիճակագրություն, ներառյալ վիճակագրական տեղեկություններ՝ ըստ պաշտոնների, ըստ հանրային և մասնավոր ոլորտների տարբերակման, տեղեկություններ բռնագանձվող գույքի, իրավաբանական անձանց կողմից կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ:

3. Ի՞նչ արդյունքների ենք ուզում հասնել՝ իրականացնելով այս հանձնառությունը:

Վերոնշյալ գործընթացների իրականացման արդյունքում էլեկտրոնային միասնական վիճակագրական գործիքը կապահովի դատարանների գործունեության արդյունավետության գնահատման հնարավորությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունը:

Դատական համակարգի շարունակական բարեփոխումները, ի թիվս այլնի, պետք է նպատակ հետապնդեն.

- երաշխավորել արդարադատության արդյունավետության բարձրացման և դատական պրակտիկայի միասնականության ապահովումը, ինչպես նաև արդարադատության իրականացման ոլորտում սահմանել իրավական որոշակիության ավելի բարձր նշաձող, ապահովել դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների առավել լիարժեք պահպանման և դատաիրավական ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի իրացումը.
- շարունակել հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացման նպատակի իրականացումը:

Սույն գործիքի ներդրումը կտա հստակ տեղեկատվություն դատական գործերի ընթացքի վերաբերյալ, կբարձրացնի թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը դատական գործերի և գործընթացների նկատմամբ, թույլ կտա իրականացնել պարբերական վերլուծություններ նախապես սահմանված վիճակագրական ցուցիչների միջոցով:

Գործիքն առավել պարզ ու թափանցիկ կդարձնի գործընթացները և միաժամանակ թույլ կտա խուսափել պրոցեսների անհարկի երկարաձգումից:

Վիճակագրության կատարելագործումը հնարավորություն կտա նաև կոռուպցիոն գործերի քննության ամբողջական շղթային վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն ստանալ, ինչը կօգնի կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գնահատմանը:

Նշվածից բացի, դատական թվային վիճակագրության գործիքի ներդրումը և դատական վիճակագրության կատարելագործումը կօգնեն վեր հանել իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները և օրենսդրական բացերը, հանցագործության պատճառները, հիմնական տեսակները, երկարաժամկետ կտրվածքով մշտադիտարկում իրականացնել պրակտիկայի նկատմամբ, որոնք հնարավորություն կտան գնահատել կիրառված միջոցների արդյունավետությունը և արդյունքում ապացուցահենք ու թիրախային ոլորտային քաղաքականություն մշակել:

Հանձնառության վերլուծություն	
Հարցեր	**Պատասխան**
1. Ինչպե՞ս է հանձնառությունը խթանելու թափանցիկությունը:	Միջազգային փորձի և խորհրդատվության հիման վրա սահմանված վիճակագրական ցուցիչների ներդրման միջոցով հասանելի կլինեն դատական համակարգի գործընթացները (թղթաբանության գործընթացի պարզեցում, տեխնիկական ծանուցումներ), տրամաբանությունը

	և վերջնարդյունքները: Սույնով կբարձրանա իրավապահ համակարգի թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը:
2. Ինչպե՞ս հանձնառությունը կօգնի խթանել հաշվետվո-ղականությունը:	Համակարգի շրջանակներում կներդրվեն գործիքներ և մեխանիզմներ, որոնք հասանելի կդարձնեն դատական գործերի քննության հետ կապված բոլոր գործընթացները՝ ներառյալ ժամկետները: Կմիավորվեն արդարադատության և պետական մարմինների գործող բոլոր էլեկ-տրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները: Գործիքը բավականին կբարելավի դատական համակարգի հաշվետվողականությունը և լայն հնարավորություններ կստեղծի հանրային վերահսկողության իրականացման համար:
3. Ինչպե՞ս կբարելավի հանձնառությունը քաղաքա-ցիների մասնակցությունը լուծումների սահմանմանը, իրականացմանը և մոնիթորինգին:	Վիճակագրական թվային գործիքի ներդրումով կտրվի բաց հանրային հասանելիություն դատական համակարգի գործունեությանը, հնարավորություն կստեղծվի տարբեր չափանիշների հիման վրա վեր հանել վիճակագրական տվյալներ: Արդյունքում՝ հնարավոր կլինի իրականացնել հանրային վերահսկողությունը դատական գործերի և գործընթացների նկատմամբ, կատարել պարբերական վերլուծություններ նախապես սահմանված վիճակագրական ցուցիչների միջոցով:

Հանձնառության պլանավորում

Հիմնական գործողություններ	**Ակնկալվող արդյունքները**	**Ավարտման ակնկալվող ամսաթիվը**	**Շահագրգիռ կողմեր**
Գործողություն 1.	Միջազգային	2026 թ. մարտ	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն

Միջազգային փորձի ուսումնասիրություն	լավագույն փորձը ուսումնասիրվել է		**<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>**		
			Կառավարություն և պետական այլ մարմիններ	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ</u>, Իրավապահ համակարգի մարմիններ՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն «Թվային Հայաստան» հասարակական կազմակերպություն Դատաիրավական ոլորտի հասարակական կազ-մակերպություններ	Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակ ««Հարմոնիա» տեղեկա-տվական տեխնոլոգիա-ների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա» հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ Միացյալ ազ-գերի կազմա-կերպության զարգացման

			հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն		ծրագիր (UNDP)
Գործողություն 2. 1. Էլեկտրոնային առկա և ներդրվող համակարգերի բիզնես գործընթացների գույքագրում, վիճակագրություններ և զեկույցներ կազմելու հնարավորություն-ների գնահատում և համադրում: 2. Փորձագիտական աշխատանքներ	1. Բիզնես գործընթացների գույքագրումը, վիճակագրական հնարավորությունների գնահատումն իրականացվել է: 2. Կատարվել են համապատասխան փորձագիտական աշխատանքներ:	2026 թ. դեկտեմբեր	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ</u>, Իրավապահ համակարգի մարմիններ՝	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն «Թվային Հայաստան» հասարակական կազմակերպություն Դատաիրավական ոլորտի հասա-րակական կազմա-	Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակ «Հարմոնիա» տեղեկա-տվական տեխնոլոգիա-ների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա»

			Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն	կերպություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակեր-պություններ	հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ Միացյալ ազգերի կազ-մակերպու-թյան զարգացման ծրագիր (UNDP)
Գործողություն 3. Վիճակագրության հավաքագրման նպատակով տարբեր համակարգերի զարգացման և միասնականացման	Օրենսդրության նախապատրաստում միասնական վիճակագրական վերլուծության էլեկտրոնային գործիքի ներդրմանը	2027 թ. մարտ	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն	**ՔՀԿ** «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական	**Այլ** Եվրոպայի խորհրդի Երևանի

առումով օրենսդրա-կան դաշտի ուսում-նասիրություն և անհրաժեշտության դեպքում իրավական համապատասխան ակտերի նախագծերի մշակում			դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ</u>, Իրավապահ համակարգի մարմիններ՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության	կազմակերպություն «Թվային Հայաստան» հասարակական կազմակերպություն Դատաիրավական ոլորտի հասարա-կական կազմակեր-պություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակեր-պություններ	գրասենյակ «Հարմոնիա» տեղեկա-տվական տեխնոլո-գիաների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա» հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ Միացյալ ազգերի կազ-մակերպության զարգացման ծրագիր (UNDP)

			նախարարություն Վիճակագրական կոմիտե		
4. Գործողություն Ծրագրային (Soft program) լուծման մշակում	Ծրագրային (Soft program) լուծման մշակում՝ հիմնված կատարված վերլուծության վրա: Տարբեր համակարգերի հետ ծրագրային լուծումների փոխընթերցման ապահովում:	2027 թ. մարտ	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ</u>, Իրավապահ համակարգի մարմիններ՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն,	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ «Թվային Հայաստան» ՀԿ Դատաիրավական ոլորտի ՀԿ-ներ, որոնք ներգրավված են նախարարության կողմից իրականացվող բարեփոխումների գործընթացներում	Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակ «Հարմոնիա» տեղեկա-տվական տեխնոլո-գիաների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա» հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ

			Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն Վիճակագրական կոմիտե		Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)
Գործողություն. 5 Պիլոտային գործարկում	Մշակված համակարգի փորձարկում, հայտնաբերված խնդիրների շտկում	2027 թ. սեպտեմբեր	**Պատասխանատու՝** Արդարադատության նախարարություն		
			<u>Աջակից շահագրգիռ կողմեր</u>		
			Կառավարություն	**ՔՀԿ**	**Այլ**
			Փոխվարչապետ Մեր Գրիգորյանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ <u>Տեղեկատվական համակարգերի</u>	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն «Թվային Հայաստան»	Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակ «Հարմոնիա» տեղեկա-տվական

			Կառավարման խորհուրդ, Իրավապահ համակարգի մարմիններ՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հակակոռուպցիոն կոմիտե «ԷԿԵՆԳ» ՓԲԸ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն Վիճակագրական կոմիտե	հասարակական կազմակերպություն Դատաիրավական ոլորտի հասարակական կազմակերպություններ և մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններ	տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը («Հարմոնիա» հիմնադրամ)» «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)
Հանձնառության	ՀՀ կառավարության	Դատական և իրավական	Հայաստանի	Միջազգային	

կապը ռազմավարական փաստաթղթերի և այլ միջազգային գործընթացների հետ	2021-2026 թթ. ծրագրի՝ «Դատաիրավական բարեփոխումներ» բաժին:	բարեփոխումների ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագրերը 2022-2026 թթ. համար:	թվայնացման ռազմավարություն 2021-2025 թթ. համար	պարտավորություններ՝ ՏՀԶԿ-ի կողմից 2025 թվականին տրված առաջարկություններ
Կայուն զարգացման նպատակ 16՝ Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ. Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը	Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ